



Փ Չ Մ Չ ê î Չ Մ Յ Փ Չ Մ ծ Չ ä ° î àô Â Ú àô Ü
Ø Չ ծ , àô Յ ծ Չ ì àô Ü ø Ü ° ծ Յ ä Չ Բ î ä Չ Մ Յ

Չ Բ Է Չ Դ Չ Ի Չ Դ Չ 1/4 Փ

0002, 9րդ հասցի, Պուշկինի փող. 56ա, ՆՊԵ. 53 85 77,
ombuds@ombuds.am. www.ombuds.am

20 հոկտեմբերի 2010

Այսօր ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը նամակ է ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Յուրի Հայրապետյանին և Ադրբեջանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Էլմիրա Սուլեյմանովային: Նամակը ներկայացնում էնք առանց փոփոխությունների:

ԿՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հարգելի պաշտոնակիցներ,

Հաշվի առնելով, որ մարդու իրավունքները և հումանիզմը պետք է վեր լինեն ցանկացած այլ նկատառումներից, կարծում եմ, որ ճիշտ կլիներ Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի Հանրապետության իշխանությունները փոխադարձ հանդուրժողականություն ցուցաբերելին և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելին հայի և ադրբեջանցիների դիակների վերադարձման համար:

Կոչ եմ անում և հորդորում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Յուրի Հայրապետյանին միջնորդել ԼՂ իշխանություններին վերադարձնել ադրբեջանցի Ֆարիդ Ահմեդովի և Սուբարիզ Իբրահիմովի դիակները:

Միաժամանակ կոչ եմ անում Ադրբեջանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Էլմիրա Սուլեյմանովային մարդասիրություն ցուցաբերել և պահանջել իրավասու մարմիններից միջազգային փորձագետներին թույլ տալ ուսումնասիրել ՀՀ քաղաքացու գերեվարման հանգամանքներն ու մահվան պատճառները: Կոչ եմ անում նաև միջոցներ ձեռնարկել Մանվել Սարիբեկյանի դիակը Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու գործում:

Ես՝ որպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, պատրաստ եմ իմ լիազորությունների շրջանակներում օժանդակել այդ գործընթացների պատշաճ իրականացմանը:

Ի»Օ»ԻՅ՝ԻՂՂՂՂՂՂՂ

ՆՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅ

Ñ»i ĩ³å»ñÇ μ³ÅÇÝ
Ñ»é. : /+374 10/ 53 85 77